Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Եղիշե Չարենցի անվան հ. 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (1 մասնագետ, 18 դասաժամ) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),1 լուսանկար 3x4 չափսի,

2)բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4)«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝

աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային

գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն(Ձև 5),

6)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական

գրքույկ,

8)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր

(առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00} –ից մինչև 15^{00}-ը ,բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. սեպտեմբերի 12-ին՝ ժամը 12^{00}–ին, Երևանի Եղիշե Չարենցի անվան հ.67 հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ամիրյան 9:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 53 87 80 հեռախոսահամարով: